

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1909

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ
ԿԷ
ՀՈԿԵՏԵՄ.
Թ. 10

ԱԶԳԱՅԻՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԳԻՐԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

Հ Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԿԱՐԵԻՈՐ ԱՌԵՂՇՈՒԱԾ ՄԸ

ԵՒ ԱՆՈՐ ԼՈՒԾՄԱՆ ՆԱԽԱՌՐԶԸ

Խօսքս ուղղակի այն նուիրական մատենին վրայ է՝ որ յաջորդաբար առարկայ եղաւ վարագայ վանաց բարեկրօն միանձանց, Արծրունեաց Մլըէ Թագունւոյն և և ագնուագգի Աւագ տիկնոջ ջերմ համբոյրներուն և պաշտաման. որ վարագէն ճանապարհորդեց մինչև ի Գութայիս, և անտի ի Կ. Պօլիս և ի Վենետիկ. ուր վերջապէս յամին 1902 կատարեց իսաղաղութեամբ իր արկածալից կենաց հազարամեակը, և հրատարակութեամբ զարդանկարուց սփռեցաւ ի սփիւռս ազգաց և եղաւ նիւթ ուսումնասիրութեանց:

Մատենիս հրատարակչներն՝ հանգուցեալ Հ. Ղ. Մ. Ալիշան և Հ. Մկ. Պոտուրեան, իբր ի Թու. Հայոց ՅԾԱ (= 902) և Մլըէ Թագունւոյն համար գրուած

յայտարարած են. և այսպէս ալ սրբազան հնութիւններով պարագողներն ճանչցեր և զրեւ են: Սակայն վերջերս Մայրավանացս Զեռագրաց ցանկը յօրինելու առիթով՝ այդ սրբազան մատենանը մանրախուզիւ ուսումնասիրել և ստորագրել ուզեցի. կրնամ ըսել՝ որ իմ այդ ուսումնասիրութիւնը բարեբաղդաբար շատ տարբեր արդիւնք և համոզումն յառաջ բերին իմ մէջ. այսինքն թէ՛ նախ և առաջ Աւետարանն Մլըէ Թագունւոյ հրամանաւ գրուած չէ. երկրորդ՝ թէ՛ Աւետարանս վերոյիշեալ Թուականէն շատ աւելի հին ըլլալու էր և է՝ իսկ անտարակոյս:

Աւետարանիս ընդհանուր և մանրամասն նկարագրութիւնը՝ Յանկիս հրատարակութեանը կը վերապահեմ. իսկ ներկայիս այն մասերը պիտի բաւականանամ մէջ բերել, որոնցմով մեծապէս կը յուսամ թէ պիտ' ապացուցուին դրականապէս վերը՝ իբր ի յառաջգրունէ՝ (a priori) առաջարկուած կրկին կէտերն: Բայց ճանի որ իմ յիշեալ ներկայութիւնը անտիպ է և հասարակութեան զեռ անձանօթ, թող աւելորդ չհամարուի զնել անոր՝ ըստ թղթահամարաց Զեռագրին — կոչուած տեղերուն առնթեք՝ նոյնպէս վենետիկեան վերոյիշեալ

1. Տես. «Զարդանկար» Աւետարանի Մլըէ Թագունւոյ... հրատարակեալ Հագարամեայ յօրինի առթիւ. Վենետիկ — Ս. Ղազար, 1902»:

արդէն ծանօթ հրատարակութեան էջերն ու յիշատակարանաց, են, թիւերն՝ ևս: Այժմ տեսնենք մեր վերեւ յայտնած կրկին կարծեաց նպատակող փաստորդ:

Արդ Ձեռագրիս առաջին փաստը կ'ընծայեն մեզ բարեբաղդաբար անոր մէջ պարունակուած բազմաթիւ յիշատակարաններն, որոնք կը բաժնուին ի նախամըլքէան, մըլքէան և յետ Մըլքէի: Ես իմ հնագրական հետազոտութեանց մէջ չեմ հանդիպած բնաւ յիշատակարան ունեցող ո՛ր և է Ձեռագրի, որուն գրիչն միանգամ և բազմիցս յանձնած չըլլայ անոր նախկին ստացողը — որուն հրամանով կամ սատարութեամբ ձեռք զարկած է գրել — ընթերցողաց աղօթքին, նա մանաւանդ գովեստով զըրուտած չըլլայ զանի և իւր ազգատոհմը: Իսկ արդ՝ ուշի ուշով աչքէ անցնելով Աւետարանիս այն հնագոյն յիշատակարաններն՝ որոնք բուն գրչէն զըրուած են, բոլորովին հակառակը կը տեսնենք. այսինքն՝ ուրիշ անուան կամ հաստատութեան ընծայուած է այն, և ոչ թէ Մըլքէի Այ՛, բանալով, թղ. 6ր. այն է Մատթէոս Աւետարանչի պատկերին յետին—անշուք քառակուսւոյ մէջ և աղիւսակած և յիշատակարանը (հմտ. տպ. եր. 9, յիշակ. 5Է.) որ մետրպեան փոքր երկաթագրով զըրուած է և անտարակոյս հնագոյն, կու տայ մեզ (քառակուսիէն դուրս զըրուած բառին հետ ի միասին) հետեւեալը. « Վարագայ է Աւետարանս », ինչպէս

շատ յաճող կերպով լուծեք է Հ. Պոստոլեան: Անտարակոյս «Աւետարանս» բառէն վերջ հորիզոնական գծով զատուած. «Աստուած ողորմի Մէլքի (կամ Մէլքի) Թատհոյն» յաւելուածը՝ ոչ թէ բուն գրչէն, այլ Մըլքէի գրչութեամբ և ուրիշ ժամանակի և պարագայի մէջ զըրուած է հոս. և ասոր վրայ տարակուսին իսկ աւելորդ է, ով իրարու հետ ուզէ բաղդատել: Ապա ուրեմն կը հետեւի՝ որ Մըլքէ Թագուհիէն շատ տարիներ յառաջ զըրուած էր այն՝ Վարագայ տոբք Նշան վանքին համար և հաւանօրէն անոր միարաններէն միոյն ձեռքով:

Բ. Մատթէոսեան աւետարանին վերջ (թղ. 137ր) Մըլքէ Թագուհիին իւր իսկ ձեռքով գրած յիշատակարանին (հմտ. տըպագրութեան եր. 9, յիշատակ. 6րդ) մէջ — որուն բուն թուականը ՅԾԱը քերած են Անդրիաս և Գէորգ քահանայք, և իրենց կողմէն ի ստորեւ յաւելցուցած՝ երկտող զըրութեան յարմարեցնելու համար տրամաբար՝ Ծ. Ժ. Ը. Թուականը գրած անոր տեղ — Վարագայ տոբք Աւտոսածոյն վանքին նուիրած կը ծանուցանէ իր Աւետարանը, ըսելով. «Ես Մըլքէ ազախին Գրիստոսի եւ Հայոց քաղաքի ՅԾԱ. Թվականիս ետո զԱւետարանս՝ ի Վարագայ տոբք Աւտոսածոյն», զոր իմ ձեռամբս եւ ծահաւք շինեալ՝ յաւանականութիւն ինձ եւ արքային իմոյ Գագկայ եւ զաւակաց իւրոց. ով ոք կարդա՝ յաղաւթս յիշէք ա-

1. Ի զիպ՝ այս տեղ պէտք եմ ըսել որ սոյն հրատարակութեան մէջ նախ որ Աւետարանիս յիշատակարաններն էջերու առաջադրաց թիւերուն համաժայն մէջ բերուած են, իսկ մենք ժամանակագրական կարգաւ կամ լաւ ևս ըստ հնութեան մէջ պիտի բերենք զանոնք, ուր հարկ ըլլայ մէջ բերել: Բ. Հնո՛ խորանայնէն ոչ մէկը՝ կանոններով ի միասին նմանաչափուած է, որ յոյժ հարկաւոր էր մի և նոյն գրչին այդ գրին՝ Աւետարանի բնագրին ունեցած տարբերութեան և հնագոյն յիշատակարանաց հետ ունեցած սերտ աննշխարակ կամ նմանակութիւնն իմանալու համար: Գ. Երկրորդ խորան — որ հնագրական տեսակէտով յոյժ հետաքրքրական է՝ — զանց եղած է. իսկ չորս աւետարանաց պատկերքն յետեւ առաջ զետեղուած են, այնպէս ինչպէս որ սխալ կազմուած են բնագրին մէջ: Զորորդ՝ Մատթէոսեան աւետարանի վերջ զըրուած Յրդ յիշատակարանին (տես հրատ. էջ 9, 6րդ յիշատ.) մէջ բերուած թուականն՝ 844 կարգաւորուած է, շփոթելով երկայնտան ծայ՝ (Մ)

կենի (Ա) հետ: ՅԾԱ ընթերցման ճշդութիւնն ակնեթեւ է նոյն իսկ Աւետարանիս (թղ. 463 ր) քառակուսւոյ մէջ եղած հակիրճ յիշատակարանէս. ՃԿՅ Թիթ. 87Ա թվականին) Ապո 1Է, Բ Արեգ 2, Ե՛) Թող աւելորդ չաճարակի ըսել՝ որ վերջնայ մէջ իսկ երկայնտան ծան (Մ) է յար և նման առաջնոյն, և երկուքն ևս Մըլքէի գրչին յատուկ, զի Աւետարանին թէ՛ բոլոր բնագրին և թէ՛ հին գրչին ծայերն առնենք ալ կանխաւոր են:

2. Այս ակն յայտին վկայութիւնը ծանօթ ըլլալով հանդէս է: Գ. Աւետարանի յիշեալ հրատարակութեան յառաջարանին մէջ կը շարունակէ գրել — չգիտեմ ինչ պատճառաւ. — «Մըլքէ իր զաւակաց ալս իր ձեռաց զարդարելով մատանն ընծայեք է Վարագայ վանաց Ս. Խայկեղեցուն»): Հաւանաբար մեծ հնագէտս կամ Վարագայ Ս. Աւտուտանին եկեղեցին՝ Ս. Խայկին հետ նոյն համարած է, և կամ Մըլքէի յիշատակարանը՝ գրչի յիշատակարանին հետ փոխանակած, ուր ինչպէս պիտի տեսնենք, Ս. Խայկ կամ լաւ ևս Ս. Նշան յիշատակուած է:

առջի Աստուածամարտ. եւ Աստուած հա- սարակաց ողորմե(ս)ցի»... Իսկ Մարկոսի աւետարանին վերջ (Թղ. 222բ.) բնագրի նման երկաթագրով գրուած ուրիշ տը- դարձակ յիշատակարանի մը հետեւ. որ- պագրութեան 2 նմանահանութիւնը) մէջ — որ բարբարոսաբար գերուած է նոյն- պէս Բայինդուրի որդի Գէօրգի՝ կամ լաւ ևս անոր կողմէն ծրող Մեսրոպ վարդա- պետի ձեռքով — ընդհակառակն Վարազայ Սորբ Նշան վանքը կը յիշատակուի՝ իր- րե նախկին ստացող Աւետարանիս, այս- պէս. «Ձոր շինեաց (յար)եւշատութիւն կե- նաց եւ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ, եւ մե- ղաց եւ յանգանաց Թողութիւն. Իսկ որ հակառակ ելանէ եւ հանէ զգիրս ի Վա- րազայ՝ ինքն (մո)ռասցի (կամ հեռասցի) յԱստուծոյ եւ ի Սորբ Նշանես. Եւ որ պահէ յեկեղեցիս թ... թա... (աւրհնեալ լիցի) յԱստուծոյ»:

Արդ՝ դիտելով որ Վարազայ սուրբ Աս- տուածածին վանքը Թ. դարուն վերջը Գագիկ Արծրունեաց Թագաւորի եւ Մլքէ Թագուհւոյ հրամանով եւ ծախուց շինուած է, իսկ Սուրբ Նշանն ընդ հակառակն շատ աւելի հին է, զի Սուրբ Հոսիփոսմէի նշա- նէն առած է՝ ըստ աւանդութեան՝ իր յորը- յորջումը, ապա ուրեմն կը հետեի՝ որ Վարազայ Սորբ Աստուածածին վանքը, գուցէ թէ նոյն իսկ Մլքէ Թագուհին չի ծնած՝ Աւետարանս գրուած էր եւ Վարա- զայ Սորբ Նշան վանքի ժառանգութիւն դարձած:

Մինչև հիմայ ըսուածներէն երկու բան որոշ է եւ առանց երկրայութեան. այսինքն՝ Մլքէի կողմէն Աւետարանիս՝ Վարազայ Ս. Աստուածածին եկեղեցւոյն ընծայուե- լոյն ճիշդ տարեթիւն, այն է 830¹ (= 902), համաձայն մէջ բերուած Մլքէ Թա- գուհւոյ կրկին յիշատականներուն. և եր- կորոգ՝ անոր ո՛չ թէ Մլքէի, այլ ուղղակի Վարազայ Ս. Նշան վանքին համար յատ- կապէս գրուած ըլլալն: Ուստի այժմ կը մնայ մեզ գիտնալ այդ Աւետարանի գրու- թեան ճշգրիտ ժամանակը:

Այս բանին համար ես կը հրաւիրեմ վերստին հնագրաց ուշադրութիւնը Մար- կոսի Աւետարանին վերջ (Թղ. 222բ.) գրուած՝ գրչութեան հնագոյն յիշատակա- րանին վերջը գրչութիւն ունեցող յոյժ ե- զական եւ աչքի զարնող եղելութեան մը վրայ, որ սակայն անուշադիր մնացեր է ցարդ ոչ միայն հրատակիչներուն, այլ և ընթերցողաց կողմէն: Դա՝ մեծ երկաթա-

գիր **Յ** զխատառն է՝ զրոշմուած երկու սիւնակներու միջեւ Թողուած լուսանցին վրայ, և յիշատակարանի վերջին բառէն «**Ե** Աստուծոյ» քիչ հեռի, այսպէս

«**Յ** Թայ».

Դիտելով որ սոյն տառս ճիշդ քերուած հնագոյն՝ յիշատակարանի միւս **Յ** միջակ տառերուն ձեռով և սրճագոյն մեկանով գրուած է. դիտելով մանաւանդ՝ որ մի և նոյն վանդալական ձեռքն փորձած է միա- ժամանակ զայս ևս քերել կամ քերթել,

1. Տես Հ. Ներսէս Վ. Սարգիսեանի Ստորագրու- թիւք Ի փոքր եւ ի մեծ Հայք, տպ. Վենետիկ, 1864, եր. 256:

2. Արդ՝ դիտելով, որ Մլքէ իր ձեռքով գրուած եր- կորոգ (ըստ ստագրութեան 6րդ) յիշատակարանին մէջ՝ յամեն902 թուարոշակի ինքզինքը «**Հ** Հայոց Թագուհի» անուանած է, չենք կրնար ընդունիլ իբր պատմական հրատարակչին (յէ՛ 7) 2. ծանօթագրութեան մէջ գծած սոյն վարկածը. այսինքն թէ «Սորբի Թագաւորութեան 186թորդ տարին, 908 Թուականին Փրեմարոս, Գագիկ, Իբրի Թագաւոր, Վասպուրական դարձաւ»: Թէպէտև յայտնապէս անդ մը նշանակուած չէ թէ երբ և ինչ տոհմով տէր դարձաւ Մլքէ՝ դուստր Դաւաղ Բագրա- տունուոյ՝ այդ Աւետարանին, սակայն շատ հաւանական է որ Արծրունեաց Գագիկ իշխանին հետ ամուսնացած պահուն՝ իբրեւ նուէր ընդունած ըլլայ Վարազայ Ս. Նշան վանքի միաբանից կողմէն:

Յ. Հոս աւելորդ չենք համարիր դիտել տալ՝ որ յի- շատակարանի գիրն տիրապէս կը տարբերէ Աւետարա- նի երկաթագրէն: Եւ այս տարբերութիւնն մասամբ յա- տակցած է քերտիկէն՝ որով գիրերու ամբողջութիւնն այլանդակուած է, և մասամբ ալ անձնօթ մէկը անդ անդ փորձած է՝ անարուեստ կերպով զանոնք նորոգել: Ըստ որում սեպագոյն մէկանն իսկ կը մասնէ. որում հա- մար ալ Հ. Երբեմն Մէթեան տարակոյս յայտնած է ա- նոր հնութեան վրայ, այսինքն թէ քնագրէն ըստ վերջ և զուցէ ստացողի մը ձեռքով գրուած: Ես չեմ կրնար համաձայնիլ այս կարծեաց, զիտնալով ի փորձոյ՝ որ ուրիշ շատ Զեռագիրներու մէջ ևս զրիչը՝ բնագրէն տար- բեր քրով յիշատակարանները գրելու սովոր են:

Իսկ եթէ ստացուցողի որ յիշատակարանս ստուգիւ յետագոյն զրէջ մ'իշխւած է, այն ժամանակ կը հետեի որ Աւետարանս նոյն իսկ **Յ**. Թուականէն յառաջ գրուած ըլլայ:

ուստի ընաւ չենք տարակուսիր անոր հընութեան վրայ: Ինչ բանի համար գծած է զրիչն այդ մեծ յին՝ յիշեալ տեղը: Յոյժ անտեղի է ըստ իս իրրեւ բացառական նախորդ համարի զայն, քանի որ, ինչպէս տեսանք, Աստուծոյ բառին դիմաց արդէն միջակ 8 նախորդի մը գոյութիւնն ակնհերեւ է: Ուրեմն եթէ ստուգուի նորագոյն ձեռքի մը կամ գրչի խաղ չէ, եթէ բացառական նախորդի մը չէ, հարկ է որ ըլլայ այն մատենիս գրչութեան թուակաւնը: Իրաւ է որ այսպիսի օրինակներ սակաւադէպ են՝ բայց և յոյժ բանաւոր և ընական, մանաւանդ եթէ խորհինք որ զրիչն՝ ի տողամիջի իւր յիշատակարանին մէջ ևս նախ գրած էր — յատուկ պարագաներով — թուականը, բայց գուշակելով որ ապագայում ստացողին մէջը կրնայ ջնջել իր յիշատակարանը՝ ուրիշ մը գրելու համար, — ինչպէս իրօք ալ ջնջած են — խոհեմութիւն համարեւ է՝ անոր ստորոտն ևս կրկին գծել զայն: Ասոր իրրեւ շօշափելի օրինակն արդէն տուած է Մլքէ թագուհին իսկ՝ գծելով Աւետարանիս վերջին երեսին վրայ «յծա թ.»: Ուրեմն եթէ մեր տուած մեկնութիւնն ուղիղ է, կը հետևի որ սրբազան մատենան ի թու. հայ. 8 (= 300 + 551) = Փրկչական թուին 851ին գրուած է: Ուստի մինչև ցարդ ուրոշ թուական ունեցող և մեզ ծանօթ հին Աւետարաններէն հնագոյնը, և որ զարմանալին է՝ ամենէն աւելի լաւ պահուածն և կատարելագոյնը:

Ուշի ուշով եթէ ճննենք մատենիս ներքին հանգամանքները, ամէնքն ալ կը նուազանան Աւետարանիս խոր հնութեան: Նախ և առաջ մագաղաթն որ նուրբ էր կակուղ ողորկ և սպիտակ՝ այժմ իսպառ դեղնած է կծկած, և մանաւանդ թէ տեղ-տեղ եգիպտական հին պապիրոսի գոյն առած և նոյն իսկ իրր կորուսած իր բնահզեայ փայլունութիւնը: Դիտելով որ ընդհանրապէս լաւ և խնամոտ ձեռքերու մէջ պահուած է այն, այս երկուքս ուրիշ կերպ զոռար է մեկնել, բայց եթէ արդիւնք համարել կամ ամենահին ժամա-

նակի ազդեցութեան, և կամ Ժ-ԺԳ դարէն տարբեր պատրաստութեան մը: Մենքուր Վ. Տէր Մովսիսեան՝ խօսելով՝ Երուսաղէմայ անթուական Աւետարանին վրայ, ասոր հնագոյն ըլլալուն ապացոյցներէն մին կը համարի «կոպիտ, հաստ, սրճագոյն — անմաքուր և փայտի պէս կոշտ» լինելը: մինչդեռ ըստ Սահ. Վ. Խապարեանի նկարագրութեան (տես Հանդ. Ամս. 1901, էջ, 33-35) «ոգրկեալ, ու սպիտակ, յաճախ թանձր ու մերթ նորք մագաղաթ» է: Յատկութիւններ՝ որոնք սակայն ըստ իս ոչ ընդհանուր և ոչ ալ անվերջ նշաններ են խոր հնութեան. ինչպէս ասոր հակառակ լաւ պատրաստուած՝ նուրբ և թաւշանման ամէն մագաղաթ ալ նշան չէ միշտ նորութեան: Եւ յիշելով մեր Մատենադարանին մէջ կայ ճառերն տրին ԻԲ. (և ուրիշ Ձեռագիր) որոնք տագաղաթն ըստ ամենայնի յար և նման է Տէր Մովսիսեանի նկարագրածին, սակայն և այնպէս այդ ճառերն տրին ԺԳ. դարուն գրուած է: Այսպէս ընդհակառակն Երուսակոյ գրատանց մէջ ծանօթ են ազնիւ մագաղաթեայ յիշատակարաններ՝ որոնք հընութիւնը մինչև Գ — Ե. դարը վեր կ'ելնէ: Մլքէի Աւետարանին մագաղաթն՝ իրաւ է՝ որ իր նրբութեամբ և լաւ պատրաստութեամբ աննման է վերոյիշեալին. բայց հանդերձ այսու՝ երուսաղէմեանէն ոչինչ նուազ հնութեան դեռ ուրիշ հետքեր կը կրէ իր վրայ և շատ կտերով ասոր կը համաձայնի, ինչպէս պիտի տեսնենք:

Բ. Աւետարանն հակառակ իւր 34 29 հրդմ. մեծութեան (ի սկզբան աւելի մեծ էր, զի երեցս կազմուած և կտրուած է) և արտաքին վեհութեան՝ ներքսպէս յոյժ անշուք է և վերջին աստիճան պարզ, չունի արքայական շուք մը. այսինքն՝ չունի ընաւ ոչ կիսախորան, ոչ մի զարդագիր և ոչ ալ ո՛ր և է լուսանցազարդ՝ գունաւոր կամ անգոյն. մինչդեռ Մոս-

կուսայի և Երուսաղէմի օրինակքն իսկ ունին երկայնաձև և մեծ գլխատառեր. իսկ հոս ասոնք իսկ չկան. մինչդեռ Ժ. դարում և ի սկիզբն ԺԱ. ին գրուած աւետարաններն, — որպիսիք են մեր Ի. Ժ. և Լ. Աւետարաններն, — ճոխացեալ են գունազեղ կիսախորաններով կամ երկայնաձիգ մեծ զարդազրերով: Սոյն Օրինակաց հակափորձը մէկ կողմէն, և միւս կողմէն ալ ի նկատի առնելով որ Մոսկուայի և Երուսաղէմայ հնագոյն Աւետարաններն ևս չունին կիսախորաններ և զարդագիրներ, կուտաններ կու տան մեզ հետեցնելու, որ մինչև Թ. դարը գէթ՝ Հայոց քով սովորութիւն չկար կիսախորաններով և զարդազրերով պննելու Աւետարանները. իսկ լուսանցազարդեր յօրինելու գիւտը դեռ աւելի ուշ սկսած է, այսինքն կամ ԺԱ. դարու վերջերն, և կամ ի սկզբն ԺԲ. ին: Այս ուրեմն ինչ որ ենթադրութեամբ ըսուած է Երուսաղէմեան Աւետարանի համար, նոյնը առաւելութեամբ կարելի է եզրակացնել Մէքէի աւետարանին նկատմամբ իսկ, որ ըստ իս կարող է անոր իբր նախագաղափար իսկ ծառայած ըլլալ:

Բնագիրն առ հասարակ գրուած է մետրոպեան միջակ, ամենապարզ, կտրած և մարմնիչ երկաթազրով, և չունի Մոսկուայի և Երուսաղէմի աւետարանաց գրերու նորութիւնը: Խորագիրը անգամ ճիշդ բնագրի սրճագոյն կամ զգոյրային մեղանով գրուած են իւրաքանչիւր աւետարանի վերին լուսանցքին վերնագոյն եզերքը, և այն իսկ բնագրէն աւելի փոքրադիր տառերով և մէկ տողի վրայ:

Բան մը որ միայն Աւետարանիս մէջ տեսած եմ և որ ասոր յատուկ եզակաւ նութիւն մ'է, այսինքն՝ Աւետարանաց զըլխաւոր բաժանմանց կամ մեծ գլուխներու սկզբնատառերն՝ իրենց յանկաւոր բառերէն զգալի միջոցաւ հեռի գրուած են և իրենց ուղղահայեաց գծով գծուած սահմանէն դուրս, այսինքն՝ արտաքին լուսանցին վրայ:

Բան ըլլանք զարձեալ՝ որ թերթահամարներն (58) — որոնց իւրաքանչիւրն ունի

8 թուղթ, բաց ի մի քանիսը — վերին լուսանցից վրայ գրուած են՝ բնագրէն տարբեր երկաթազրով և քառակուսինբու մէջ: Թուելու համար հայկական տառերն՝ սովորականէն բոլորովին տարբեր հաշուով գործածուած են. օրի. աղագաւ Ա = 1, Ժ = 10, Ի = 11, Լ = 12 են: Մինչև Մարկոսի աւետարանին վերջը Ո (= 28) թերթ: Ղուկասու աւետարանը զարձեալ Ա ով կը սկսի և կը հասնի մինչև Վ (= 30), Յովհաննու աւետարանին թերթահամարներն հին զրէն նշանակուած չեն: Այս անսովոր իրողութիւնը տեսնելով վերջին ստացողներէն մին՝ բոլորգրով նոր թերթահամարները դրած է՝ ստորին լուսանցքներուն վրայ, հայկական այբուբենը սովորական ոճով հաշուելով. այսինքն՝ Ժ = 10, Ի = 20, Լ = 30, ևն: Դարձեալ կրկին քառակուսինբու մէջ նշանակուած են նաև յիսնեկաց ընթերցուածներն կամ եօթնեկաց օրերը Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է:

Գ. կէտադրութիւնն ամենապարզ է և յարենման յունական կէտադրութեան. այսինքն՝ կը բաղկանայ միայն ստորակէտէ (Ϛ), միջակէտէ (ϛ) և վերջակէտէ (Ϟ): Վերջին երկուքը զրեթէ մի և նոյն են, միայն դրիւք կը զանազանին: Թրածն նշան մ'ալ գործածուած է՝ և այն աւելի յատուկ անուանց և կրկնակ ձայնաւորներու վրայ, որ շեշտէ աւելի թերեւ երկայնի կամ սուղ ամանակի նշան ըլլայ: Պարոյկ (ϙ) կամ հարցական խիստ հազուադէպ են. իսկ բութ (ϝ) բնաւ չի տեսնուիր:

Ձեռագիրս ԻԲ. Աւետարանին չափ մեծատառ կամ խոշորագիր չըլլալով՝ որչափ որ գրիչն ազատ մնացեր է (ուղղագրութեան մէջ) անոր անսովոր բաժանումներն ընելէ՝ թէ՛ ի տողամիջի և թէ՛ ի տողավերջի և ի սկիզբն տողից, սակայն և այնպէս Ժ-ԺԱ. դարու սովորական ձևէն դուրս աչքի զարնող բաժանումներ և ուղղագրութիւններ ունի, որոնք ուշագրութեան արժանի են: Երբ վերջին տառին թիչ տեղ մնացեր է՝ սովորականէն շատ

աւելի փոքր կը գրէ զայն, այսպէս. « անդէ » . իսկ երբ տեղ կը պակսի բոլորովին՝ տողադարձի վերջընթեր տառին վրայ կը գրէ զայն՝ բայց թէրս դարձուցած, այսպէս. « անո՞ւ անեցաւ » : Միավանկ բառերն իսկ տողադարձ ըրած ժամանակ՝ առաջին տառէն կ'անջատէ, և առանց որևէ տողադարձի նշանի՝ վանկին կէսը յաջորդ տողին կ'անցնէ, այսպէս, « Առիս գաւս » : Զայով սկսող անուանց կամ բառից ըով — երբ հայցականի կը փոխուի — զ նախդրին և սկզբնատառին ընդ մէջ եթ տառը կը յաւելցուի, այսպէս, « Զը Զարա՛, Զը Զորաբարել, Զը Զատիկ » ևն ևն, հաւանօրէն զ նախդիրը ուղղական սկզբնատառէն որոշելու և կամ երկու ձայներն ուղայն արտասանելու նպատակաւ : Երբ գրած բառին վերջի տառն և յաջորդին սկզբնատառն ինկէ հանդիպին՝ նախորդ ինիին յետև փշիկ մը կը դրուի, այսպէս, « ուստի՛իցէ » : Նոյնը կ'ըլլուի՝ հաստատուն օրինօք՝ երբ կրկնակ ևն ըռնգային բաղաձայններ բառին վերջը հանդիպին, և կամ երրորդ ևն մ'ալ յաջորդ բառին սկիզբը գայ. օրի. աղագաւ, « ի մկրտութիւնն նորա, յետ գերութեանն՝ Բարել » ևն, հաւանօրէն զեղչուած ձայնաւոր մ'ենթադրելով լռելեայն, և կամ ցուցնել ուզելով որ վերջինն՝ որոշիչ յօդ է : Իսկ երբ բառի մը յաջորդ ինին նախդիր է՝ վրան երբեմն (այսինքն՝ ի տողադարձին) և երբեմն ալ (ի տողամիջի) երկու հորիզոնական գծիկներ կը դրուին. օր. իմն. « Կցորեանն ի շտեմարանս իւր », « ի բաց կայէք » ևն . և այս գծիկներս հաւանօրէն ինիին երկայն առանակ ըլլալը ցոյց կու տան :

Բաց ի պատիւէն (—), — զոր մեր օձէ և ի Բ. անթուական՝ բայց գրեթէ նոյնքան

հին Աւետարաններուն պէս հետեւալ վեց անուանց վրայ կը դնէ՝ Աժ, Տէր, Թն, Գն, Իէդ, Եէմ, — հետեւալ կէս պատուանիշ (✓) մ'ալ գործածուած է յատուկ անուանց վրայ, այսպէս. « Յովհաննէս, Հերովդէս, Թուդիա, Աբիա, Թովսիա, Եղեկիա, Զաքարիա », ևն : Այս ածականն շաղկապէն զանազանելու համար վրան շեշտ կը դնէ այսպէս « ընդ այլ ճանապարհ » : Թէ և եթէ շաղկապներն ալ միշտ « բն » և « երն » կը գրուին. բայց երբ մէջ ևս սովորաբար և տառին տեղ և կը գործածուի յաճախ, և նոյն իսկ յանկատարն, ինչպէս և հով վերջացող անուանց սեռականը : Թոյժ նշանաւոր է նաև բայերու բառերու և յատուկ անուանց երբեմն վերջին, երբեմն միջին և երբեմն առաջին վանկերու շեշտաւորումը, որ յուսարէնի ազդեցութեան արդիւնք է և հին : Այսպէս են նաև հետեւալ անուանածներն. « Սաղովմոյն, Թուսէփ (սեռ. Թուսեփու), Էսաի (ս. Էսայա), Բեթղեեմ, որսւորդս » : Աստուածային երրորդ անձը միշտ առանց դիմորոշ յօդի կը գրուի, այսպէս « Հոգի՛ սուրբ եկեսցէ, ի Հոգւոյ սրբոյ է », ևն : Կան դեռ ուրիշ մանրամասնութիւններ, բայց յօդուածս չի ներեր զանոնք մի առ մի մէջ բերել :

Ի. Բաղդաստելով Աւետարանիս բնագիրն՝ Երուսաղէմի և Մոսկուայի Աւետարաններու բնագրոց հետ (տես Հանդ. Ամս. 1901, էջ 34—35) ականբեւ տեսանք՝ որ մերն ըստ ամենայնի և ամէն անգամ հաւմածայն կ'ընթանայ ասոնցմէ առաջնոյն, և մի և նոյն բաներով կը հեռանայ վերջինէն, այսինքն՝ Մոսկուայի բնագրէն : Բաց ի բնագրի տարբերութենէն նշանաւոր են մեր Աւետարանին լուսանցից վրայ՝ փոքր երկաթագրով՝ գրուած հին Թարգմանութեան մը (անծանօթ) տարբերութիւնքն՝

1. Որինակի ազգաւ, Բզ. 7ա. Մատթեոսեան բնագրի « Վիրք ճնդհան » ի դիմացը լինելոյ, — Բզ. 17ա. Գիթանակ « յայնկոյս Գաղիզայի » Ազգաց, — Բզ. 18բ. « Ինկապօղեայ » ի դիմաց՝ Տառն (բազաբաց), — Բզ. 31բ. « Կասցից » ի դիմացը՝ Խոստացոյց, — Թդ. 37բ. « զարմացան » ի դիմաց՝ Երկեան, — Բզ. 52ա. « զամենեանս » ի

դիմացը՝ Զնոսա, — Բզ. 64ա. « Յովսէս » ի դիմացը՝ Ծովսէփ, — Այդ. « Ռուգա » ի դիմացը՝ Բուգոս, — Թդ. 65ա. « Երուզիմայ » ի դիմացը՝ Էրուզիմոյա, — Թդ. 69ա. « Ի վերայ մեր » ի դիմացը՝ Վառն մեր, — Այդ. « զարան » ի դիմացը՝ Զպատոգիւրան, ևն, ևն :

ևս, որմէ անցած են ապա Թ-ԺԲ դարուն գրուած ուրիշ հին Աւետարաններուն իսկ՝ ընդօրինակողաց ձեռքով։ Մոսկուայի Աւետարանին (դժբաղդաբար յոյժ թերի) մէջ արդէն կը տեսնուին այս կարգի տարբերութիւններէն ոմանք, բայց երուսաղէմեանին մէջ չգիտեմ թէ կան արդեօք, եթէ ոչ. գի Սահ. Վ. Խապայեան յիշեալ տեղը ասոնց մասին բան մ'ըսած չէ։ Ինչ և իցէ, Մլքէի Աւետարանին և Երուսաղէմեանի բնագրոց կատարեալ համաձայնութիւն միայն այժմ ի նկատի առած՝ պէտք է ըսել, որ մէկը միւսէն զազափարուած ըլլայ։ Բայց թէ ո՞րն արդեօք իբրեւ նախագաղափար ծառայած է միւսին, զըժուար է բացարձակ վճիռ մը տալ, քանի որ մանաւանդ Երուսաղէմեան թիւ 2555 Աւետարանը անձամբ տեսած և ըստ բոլորին ուսումնասիրելու ասիթ դեռ ունեցած չեմ։ Սակայն հաստատուած Տէր Մեսրոպ Վ. Տէր — Մովսիսեանի և Սահ. Վ. Խապայեանի տուած գրչագրական տեղեկութեանց վրայ, մեզ հաւանական կը թուի աւելի Մլքէի Աւետարանին տալ նախագաղափար լինելու առաւելութիւնը։ Ահաւասիկ փաստերը։ Ըստ Սահ. Վ. Խապայեանի համառօտ նկարագրութեան (տես Հանդէս Ամս. 1901, էր. 33) Երուսաղէմեան Աւետարանին «թղ. 1 բ. (կայ) գունաւոր մեծ շրջանակի մէջ խաչ, որոյ մէջ մի թեւերէն քաշուած զոյգ շառաւիղներուն ծայրերուն վրայ փոքրիկ շրջանակներ, Մատթէոսի և Ղուկասու առաջին էջերում (կան) կէտադրեալ գունաւոր գտրդագիրներ, և Մարկոսի և Յովհաննու սկիզբներն ալ կը տեսնուի հորիզոնական հաստ գծի մը վրայ համագոյն փոքրիկ կիսախորանաց տակ մէյմէկ զոյգ նկար, թերեւ աւետարանչաց, և թղ. 8 բ. քառակուսի շրջանակաց մեջ երեք նկար» են։ Այս և անցած մանրանկարներու և զարդերու մանրամասն նկարագրութիւնը տես «Քաղմավէպ» 1908, Մարտ ամիս թիւ 3, էր. 305-307։

Արդ՝ եթէ Մլքէի Աւետարանն՝ Երուսաղէմեանէն զազափարուած լինէր, պէտք

է որ կամ բոլոր այդ մանրանկարներն ու զարդագրերն ևս ունենար այժմ (փոյթ չէ թէ կատարեալ կամ աւելի անկատար կերպով), և կամ զէթ անոնց համար դատարկ տեղ թողոյր զրիչն — ինչպէս ըրած են ուրիշ շատ զրիչներ — եթէ ինքը վարժ չէր մանրանկարչութեան արուեստին. իսկ որովհետեւ՝ ինչպէս որ կանուխէն ըսուեցաւ՝ այդ բաներէն ոչ միոյն հետքն անգամ կը գտնուի մեր սոյն Աւետարանին մէջ. ապա ուրեմն չի կրնար բացարձակապէս երուսաղէմեանէն զազափարուած ըլլալ։

Ընդհակառակն մենք կը տեսնենք որ ինչ ինչ էական բաներ՝ ինչ կարգաւ և ինչ կերպով որ կը գտնուին Մլքէեան Աւետարանին մէջ՝ նոյնեքը փոխադրուած են նաև Երուսաղէմեան Աւետարանում։ Օրի. աղագաւ, Մ. Աւետարանին սկիզբը (թղ. 4 բ - 6 ա.), այսինքն խորաններէն ետքը չորս աւետարանիչներու նկարներն ի միասին զետեղուած են, և ո՛չ թէ ըստ յետնագոյն սովորութեան իւրաքանչիւրն առանձին և իր յատուկ տեղը կամ աւետարանին հանդէպ։ Արդ՝ ըստ վկայութեան Տէր-Մովսիսեանի նոյնպէս են նաև Երուսաղէմայ Աւետարանում։ Իսկ այն բանը՝ այսինքն թէ Երուսաղէմեան Աւետարանի նկարներն աւելի անարուեստ և տրգեղ կերպով յառաջ բերուած են, դա նախագաղափարէն աւելի՝ նկարողին կարողութեան վերագրելի է։ Իրաւ է որ Մ. Աւետարանին նկարներուն վրայ յուն. մեծատառեր չկան (և ըլլալն իսկ՝ բացարձակ նշան չէ յունական նկարչութեան, վասն զի մենք ունինք մէկէն աւելի հնազոյն աւետարաններ, ուր յունարէնին հետ՝ երբեմն հայերէն տառերով և երբեմն ալ մենատառերով ևս նշանագրուած են աւետարանչաց անուանք), սակայն տարազն և տիպարներէն ակներեւ կը տեսնուի աւետարանիչներէն ամիմիապէս յառաջ զետեղուած Քրիստոսի տնօրինական պատկերաց վերջինն (Համբարձումն) — որ ուրիշ 6-7 անյայտացած նկարներ ևս գուշակել

կու տայ — աւելի եզրկատա — ասորական տիպ ունի քան թէ յունական:

Մեարոպ վարդապետ՝ Երուսաղէմեան Աւետարանի եօթն խորաններէն մէկը՝ միայն մէջ բերած է (տես Բագմամպեղ էջ 106, Նկար II) և այն իսկ այնքան փոքր և թերատ, որ դժուար է որոշ գաղափար մը կազմել ամբողջին կամ համեմատել զայն Մլրէի Աւետարանի խորանաց հետ. սակայն և այնպէս՝ երեք քաներ կան որ երկուքին մէջ ևս զբեթէ նոյն են. այսինքն յոնիական (ըստ իս դորիական) սիւններն, այսպէս և բոյսերն և թրու չունը՝ որոնք երկուքին մէջ ևս յոյժ անկատար են և նախնական պարզութեան մէջ, այսինքն չունին ժ. դարէն ետք նշկարուած տնկոց, ծառերու և թռչնոց կատարելութիւնն և շքեղութիւնը. Դարձեալ կանուխէն ըսինք՝ որ Մ. Աւետարանի խորագիրը՝ սև և մետաղական միջին երկաթազրով զրուած են. արդ Սահ. Վ. Խապայեանի տեղեկագրածին համաձայն (տես Հանդ. էջ 33) Երուսաղէմեանին ևս նոյնպէս են: Դարձեալ Մ. Աւետարանին մէջ թիրթիհամաներն՝ ինչպէս վերը տեսնենք՝ հակառակ ընդհանուր սովորութեան՝ վերին լուսանցքին վրայ նշանակուած են, մերթ քառակուսւոյ և մերթ հորիզոնական փակագծիծերու մէջ. իսկ յիւնականց ընթերցուածներն կամ եօթնեկաց օրահամարները փոքր բոլորակներու մէջ նշանակուած են, մերթ արտաքին և մերթ վերին լուսանցից վրայ: Արդ՝ Սահ. Վ. Խապայեանի տեղեկագրածին համաձայն այս-

պէս են նաև Երուսաղէմեան Աւետարանին մէջ: Այսպէս նաև Մ. Աւետարանի առաջին խորանի վրայ՝ նման Երուսաղէմեանին՝ քառակուսիներ նկարուած են խիտ առ խիտ, և անոնց մէջ կարմիր քարեր ագուցուած. իսկ անկեանց հատման տեղն ալ սպիտակ: Ասոնք իսկ բաւական ապացոյց են երկուստեք նմանակցութեանց. անդրադոյն համեմատութիւններ ընելը կը թողունք Երուսաղէմի Աւետարանն ի մօտոյ ուսումնասիրողաց:

Ե. Ապացոյց Մ. Աւետարանի խոր հնութեան կ'ընծայեն մեզ խորաններն, որոնք իրենց վերջին աստիճանն պարզութեան մէջ՝ կը ներկայացնեն մեզ եզրկատայունական ճարտարապետութեան ոճերն և նկարչութեան մոտիւններ, ըստ որում կը մշակուէին նոյն իսկ փրկչական թուականին Բ-Ե. դարերում՝ Աղեքսանդրիոյ զեղարուեստից բարձրագոյն դպրոցներուն մէջ: Յիբաւի՝ խորաններէս առաջնոյն վրայ ակնարկ մը ձգողը պիտի տեսնէ դորիական սիւններ իրենց նախնական պարզութեան մէջ. իսկ միւսներն հետզհետէ բարգաւաճուած (նշկարչական դրասանգներով և արաքնիկ զարդերով), կարծէք թէ յոնիական կամ մանաւանդ բիւզանդական խոյակներու և արիւսաղազեաներու փոխուած են. պահելով սակայն ամէնքն ալ նախնական ձևը, այսինքն սիւններուն ստորին մասը միշտ հաստ, և ձգուելով դէպ ի վեր՝ հետզհետէ կը նրբանայ, որով վերնախարիսխներն կամ կիսասիւններն անհամաչափ կերպով դուրս ցցուած կը տեսնուին. մինչ-

1. Որք էր թէ «նեքիպայցեում է յունական հեթանոսական շատ ապօրոյանի մի ամենապարզ նկար. որի վերաբարդութեան մէջ պաշտօն են հին դասական ժանրը՝ նեքիպայցեում բիւզանդական արուեստի առաջին շրջանների աշուստուններին»:

Սակայն ներքի ըսել որ, ինձ տակաւին ծանօթ է ո՛չ յունական հեթանոսական աստվածներու, որի իսկ բիւզանդական ծանօթ եկեղեցեաց խորաններուն վրայ այդպիսի արածայր զմբէթ: Իս վիտրոֆէի աւելի աստիճարարական տիպերի ազդեցութիւնը նշմարել այդ խորանին վրայ, Էս ստուգի մանիքիզիւր իսկ, որուն վերայ քրիստոնէութեան նշանը կամ խաչը կանցած է, այդ էլ ցուցնէ: Ինչպէս մանիքիզիւրիւր — բերե խորհրդանշան (symbolisme) — գործածութիւնն է. դարէն վերջ է, այսպէս ևս Խաչին յաղթանակն անոր վրայ բարձրա-

ցնելու գաղափարն աւելի վերջը տեղի ունեցած է հաստերն, և քոյէ թէ Կարօլու մօծի դարուն:

Ի դէպ՝ Կարօլինեան ձեռագրաց մէջն, յամբ Տեան 781-783 Պոգոնիակի վանականին ձեռքով և Կարօլոսի համար դրուած նկարագրող Աւետարանն, որ կը պատկեր Պրիմի Աղգալանի Քրատան մէջ (թ. 1998) լուսազոյն նմոյշ մը կը ներկայացնէ Երուսաղէմեան խորանին, այսինքն է՝ այսարանական «Ջեռոր կնեաց» մանրանկարն, որ կորնթական շոր սիւներու վրայ բարձրացած՝ որս ծայր զմբէթ մ'է՝ կամարով յարկումն Երուսաղէմեան Աւետարանի խորանին (տես Լէմիսմեի Աւետարանի 1892, եր. 50): Ասոր ասորական յունական ձագուժր ասանց երկբայութեան է, բայց բիւզանդական և կարօլինեան մոտիւններով աւելի զարգացած:

դեռ ստորին հոսսափնան խորխիսներն համեմատութեամբ աւելի կլորակ կը տեսնուին:

Իսկ մոտիններուն եզրիպտական ըլլալուն յայտնի է անծխտելի ապացոյց են նախ երկրորդ խորանին (որուն նմանահանութիւնը զանց ըրած են հրատարակիչը) և երրորդին (որ անոր զոյգը կը կազմէ) կամարապատ դաշտին վրայ նկարուած է լին՝ մը կամ գետ — ճոխ բուսականութեամբ և լոտուսներով, որուն մէջէն կը վարդի հորիզոնական դիրքով մահկեղծիւրի նըման հնածէ նաւակ մը. և երկերկու կուրդիյոսներ: Զոյգիս առաջնոյն նաւակին մէջ նստած են չորս մարդիկ՝ ձկնորսութեան դրից մէջ որ յոյժ խորհրդաւոր է, և հաւանական է որ ըստ այլաբանական մեկնութեան Որդինսայ և աղեքսանդրեան դպրոցի՝ չորս աւետարանիչները ներկայացնեն. իսկ վերջնոյն մէջ կարապանակ երկու նաւակներ կան շրջապատուած նոյն կենդանիներով, որոնց իւրաքանչիւրին մէջ մի մի մերկամարմին նաւավարներ ոտքի կանգնած և ուսերնին թիւրուն կոթնցուցած՝ յառաջ կը մղեն զանոնք: Եւ այդ երկայնասրուն և նրբիւրան նաւավարները ճիշտ նոյն կազմութիւնը ունին, ինչ որ կը ներկայացնեն մեզ փարաւոններու կոթողներու վրայ փորագրուած եզրիպտացի ռազմիկներն ու նաւաստիք: Դիտելով մանաւանդ որ ո՛չ վանայ և ո՛չ ալ Հայաստանի ուրիշ ծովակներ և գետեր բնաւ կողորդելու չեն սնուցաներ, կը հետևի ուրեմն որ եզրիպտական ծերն Նիլոսը կը ներկայացնեն յիշեալ խորանադաշտի ջրերն. հետեւաբար՝ ուղղակի եզրիպտականէ կամ ասորականէն՝ զաղափարուած են:

Գարծեալ Յրդ խորանին վերնակամարի աջ և ձախ կողմերը մի մի կարմրակտուց

և կարմրոտն թռչուններ կանգնած են արմաւենիներու վրայ. որոնք ուրիշ բան չեն՝ բայց եթէ եզրիպտացիներէն ի հնուէն պաշտուած և նուիրական իրիպը, ըստ որում զփուար է ջայլամ կամ մի այլ թռչուն ենթադրել: Եթէ ճիշդ է մեր ըսածը, այս իսկ ուրիշ յայտնի նշան մ'է եզրիպտաստական ծագման:

Ի նկատի ունելով մէկ կողմէն Աւետարանի ներքին անգարգութիւնը, և միւս կողմէն ալ այս խորաններուն բազմազունեան և յաջող մանրանկարչութիւնը, գուցէ առարկուի որ՝ սոքա եկամուտ ըլլան: Սակայն ես հիմնաւոր չեմ կրնար համարիլ այսպիսի տարակոյս մը, դիտելով մանաւանդ որ Մատթէոսի նկարին յետին գրուած է — ինչպէս տեսանք վերը — Աւետարանիս աղիւսակաձէ հին յիշատակարանը « Վարազայ է Աւետարանս » և ասոր ներքև ալ երկրորդ ստացողին Մլքէի ինքնագիր յիշատակարանը:

Զ. Փաստ մ'ալ Աւետարանիս հնութեան այն է՝ որ չորիցս կողպատուած է իր արծաթապատ կողքէն և կազմէն, և չորիցս նորոգուած և կազմուած: Այժմանը կազմել տուած է Գութթիքի Բայթուրի որդի Գեօրկի, ի թուին Հայոց ՌՃԼԱ (= 1682), որ է ըսել 227 տարեկան: Հոս համարելով մեր նուիրական մատենանը կը գտցենք և կը լրանենք, թողլով այլոց՝ որ խօսին և գրեն:

Հ. Բ. ՍՈՒԿՈՍԵԱՆ



1. Ի դէպ՝ Աւետարանի Գ. և Ե. խորաններն — որոնց առաջինը երեք և վերջին չորս սիւներու վրայ բարձրացած են — իւրաքանչիւրն վերսին չորսական փոքրիկ կիսակամարներու բաժնուած է նման Ասորական (Rabulas-Codex) որ յամին 586 գրուած է և այժմ

կը գտնուի Փլերբնիոյ Հարնտեան Մատենադարանում (տես Hugo Koberer, Die Heiligen Drei Könige, Leipzig 1909, Ste. Band, S. 81: 6. Der Syrisch-Byzantinische Kollektiv - Typus.